ՏԵՂԵԿԱՆՔ

«ՀԱՇՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հոդված 2. Հաշտարարությունը

5. Սույն հոդվածի 2.1-ին մասով նախատեսված գործերով նախքան դատարան դիմելը կողմերը կարող են չդիմել պարտադիր հաշտարարության այն դեպքում, երբ՝

1) կողմերից որևէ մեկի նկատմամբ կայացվել է «~~Ընտանիքում~~ Ընտանեկան բռնության կանխարգելման, ~~ընտանիքում~~ ընտանեկան բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ~~ընտանիքում~~ ընտանեկան համերաշխության վերականգնման մասին» օրենքով նախատեսված պաշտպանության միջոցներից որևէ մեկի կիրառման մասին որոշում՝ անկախ այդ անձի կանխարգելիչ հաշվառման վերցված լինելու կամ հաշվառումից հանված լինելու հանգամանքից.

2) կողմերից մեկը քրեական պատասխանատվության է ենթարկվել մյուս կողմի կամ նրա զավակի, ծնողի, պապի կամ տատի, եղբոր կամ քրոջ նկատմամբ դիտավորությամբ հանցագործություն կատարելու համար.

3) կողմերից մեկը օրենքով սահմանված կարգով ճանաչվել է անհայտ բացակայող կամ անգործունակ, գտնվում է կալանքի տակ կամ կրում է ազատությունից զրկելու հետ կապված պատիժ:»:

Հոդված 6. Հաշտարարի իրավունքները և պարտականությունները

1. Հաշտարարն իրավունք ունի՝

1) հաշտարարության ընթացքում հանդիպումներ կազմակերպելու ինչպես հաշտարարության բոլոր կողմերի հետ միաժամանակ, այնպես էլ հաշտարարության յուրաքանչյուր կողմի հետ առանձին.

2) ազատորեն կիրառելու օրենքով չարգելված հաշտարարության մեթոդներ.

3) իր ծառայությունների դիմաց ստանալու վճար, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի.

4) գովազդելու իր ծառայությունները:

5) դատարանի կողմից արտոնագրված հաշտարարի մասնակցությամբ հաշտարարական գործընթաց նշանակված լինելու դեպքում ծանոթանալու գործի նյութերին, ստանալու դրանց պատճենները, գործի նյութերից անելու քաղվածքներ, լուսանկարներ, լուսապատճեններ:

2. Հաշտարարը պարտավոր է՝

1) հաշտարարության կողմերին պարզաբանել իր դերը, հաշտարարության գործընթացի բնույթն ու էությունը, առավելությունները, հաշտարարության վարման կարգը, հաշտության համաձայնության և անհրաժեշտության դեպքում՝ նման համաձայնություն ձեռք չբերելու հետևանքները.

3) պահպանել հաշտարարության սկզբունքները և հաշտարարի վարքագծի կանոնները.

4) մասնակցել սույն օրենքով նախատեսված հաշտարարների վերապատրաստման դասընթացներին.

5) հաշտարարության կողմի՝ ընտանեկան բռնության ենթարկված լինելու վերաբերյալ ողջամիտ կասկած հարուցող նշանների առկայության դեպքում ընտանիքում ենթադրաբար բռնության ենթարկված կողմին տեղեկացնել «~~Ընտանիքում~~ Ընտանեկան բռնության կանխարգելման, ~~ընտանիքում~~ ընտանեկան բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ~~ընտանիքում~~ ընտանեկան համերաշխության վերականգնման մասին» օրենքով նախատեսված իրավունքների պաշտպանության եղանակների մասին:

3. Հաշտարարն ունի օրենքով սահմանված այլ իրավունքներ և պարտականություններ: